# 011102.05.7 «Կրթության կառավարում»

## Կրթության մագիստրոս

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանումը** | «Կրթության կառավարում» |
| **ՈԱՇ-ի մակարդակ** | Որակավորումների ազգային շրջանակի 7-րդ մակարդակ |
| **Որակավորման աստիճան** | Կրթության մագիստրոսի որակավորում |
| **Կրեդիտների քանակը** | 90 |
| **Ուսման տևողությունը** | 1,5 տարի |
| **Բուհ** | Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան |
| **Ֆակուլտետ** | Հասարակական գիտությունների |
| **Ամբիոն** | Մանկավարժության և հոգեբանության |
| **Ուսուցման լեզու** | Հայերեն |
| **Ուսուցման ձևը** | Առկա |
| **ԿԾ-ի մուտքի պայմաններ** | «Կրթության կառավարում» մասնագիտության կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա բակալավրի աստիճան: |
| **Ծրագրի կառուցվածքը և նկարագրությունը** | «Կրթության կառավարում» մասնագիտության մագիստրոսի կրթական ծրագրի նորմատիվային ժամկետն ուսուցման առկա ձևում մեկ ու կես տարի է, ընդհանուր ուսումնական բեռնվածությունը 90 կրեդիտ է (1 կրեդիտը՝ 30 ժամ):<br>Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից.<br>I.Ընդհանուր կրթամաս (13 կրեդիտ),<br>Կամընտրական դասընթացներ (6 կրեդիտ)<br>II.Մասնագիտական կրթամաս (27 կրեդիտ),<br>Կամընտրական դասընթացներ (13 կրեդիտ),<br>III.Գիտահետազոտական կրթամաս՝ (31 կրեդիտ): |
| **Ծրագրի հիմնական նպատակը** | Ծրագրի նպատակն է պատրաստել կառավարչական հմտություններով կոմպետենտ մասնագետներ կրթության ոլորտում ՝ տալով կրթության մագիստրոսի որակավորում: |
| **Ծրագրի կրթական վերջնարդյունքները.** | «Կրթության կառավարում» (*011101.05.7*) մասնագիտությամբ կրթության մագիստրոսի որակավորում ունեցող շրջանավարտը պետք է<br>***<u>Գիտենա</u>*՝**<br>- կրթության ոլորտում կառավարման մեթոդաբանության և արդյունավետ կառավարման արժեքները, սկզբունքները և գործարկումները,<br>- կրթության կառավարման օրենսդրական |

| | |
|---|---|
| | հիմքերը<br>- հանրության հետ կապերի կառավարման սկզբունքներն ու ձևերը<br>- բարձրագույն կրթության ոլորտում որակի ապահովման հիմնական սկզբունքները, կրթական քաղաքականության փոփոխությունների կառավարմանը, ղեկավարմանն ուղղված լավագույն կիրարկումները:<br>***Կարողանա՝***<br>- կիրառել կառավարմանը վերաբերող գիտելիքները, դրսևորել արդյունավետ առաջնորդություն, հմտորեն հաղորդակցվել և կազմակերպել թիմային աշխատանք<br>- արդյունավետ հավաքագրել տվյալներ, վերլուծել և ներկայացնել,<br>- իրականացնել կրթության ոլորտում առկա ժամանակակից մարտահրավերների լուծմանը միտված հետազոտական կամ նախագծային աշխատանք,<br>- դրսևորել քննադատական մոտեցում սեփական մասնագիտական գործունեությանը և ինքնազարգացման հնարավորություններին,<br>- մասնագիտական համայնքի զարգացմանը նպաստող գաղափարներ առաջարկել, անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրել, մասնակցել առանձին խնդիրների լուծմանն ուղղված թիմային աշխատանքներին:<br>***Տիրապետի՝***<br>- տվյալների հավաքագրման, մեկնաբանության և ներկայացման հիմական մեթոդների ու գործիքների կիրառմանը /քանակական և որակական/,<br>- գիտական պարզ ոճով հաշվետվությունների, զեկուցումների և այլ փաստաթղթերի ներկայացմանը,<br>- ուսումնագիտական միջավայրում մտքերի փոխանակմանը և հաղորդակցմանը,<br>- մասնագիտական գործունեության բարելավմանը միտված տեղեկատվական թվային տեխնոլոգիաների կիրառմանը,<br>- էթիկայի կանոններին: |
| ««Կրթության կառավարում» » | Կրթության մագիստրոսի որակավորմամբ «Կրթության |

| | |
|---|---|
| **մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ձեռք բերվող կոմպետենցիաների ցանկ** | կառավարում» մասնագիտությամբ մագիստրոսը, ելնելով մասնագիտական գործունեության խնդիրներից և հիմնական կրթական ծրագրի նպատակներից, պետք է տիրապետի հետևյալ կոմպետենցիաներին:<br><br>***<u>ա) Գործիքային կոմպետենցիաներ (այսուհետև` ԳԿ)</u>***<br>Գործիքային կոմպետենցիաները ներառում են.<br>**ԳԿ1** վերլուծելու և սինթեզելու ունակություն,<br>**ԳԿ2** կազմակերպելու և պլանավորելու ունակություն,<br>**ԳԿ3** հենքային և ընդհանուր գիտելիքներ,<br>**ԳԿ4** մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,<br>**ԳԿ8** տեղեկատվությունը կառավարելու ունակություն (տարբեր աղբյուրներից տեղեկատվություն գտնելու և վերլուծելու ունակություն),<br>**ԳԿ9** խնդիրների լուծում,<br>**ԳԿ10** որոշումների ընդունում:<br>***<u>բ) Միջանձնային կոմպետենցիաներ ( այսուհետև` ՄՁԿ)</u>***<br>Միջանձնային կոմպետենցիաները ներառում են.<br>**ՄՁԿ1** քննադատական վերլուծության և ինքնաքննադատման ունակություն,<br>**ՄՁԿ2** թիմային աշխատանք,<br>**ՄՁԿ3** միջանձնային ունակություններ,<br>**ՄՁԿ5** այլ ոլորտների փորձագետների հետ հաղորդակցվելու ունակություն,<br>**ՄՁԿ7** միջազգային միջավայրում աշխատելու ունակություն,<br>**ՄՁԿ8** բարոյական արժեքներ:<br>***<u>գ) Համակարգային կոմպետենցիաներ ( այսուհետև` ՀԳԿ)</u>***<br>Համակարգային կոմպետենցիաները ներառում են.<br>**ՀԳԿ1** գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,<br>**ՀԳԿ2** հետազոտություններ կատարելու ունակություններ,<br>**ՀԳԿ5** նոր գաղափարներ առաջ քաշելու (ստեղծագործելու) ունակություն,<br>**ՀԳԿ6** առաջնորդի հատկություններ,<br>**ՀԳԿ7** այլ երկրների մշակույթների և սովորույթների իմացություն,<br>**ՀԳԿ9** նախագծեր մշակելու և դրանք կառավարելու ունակություն: |

| | |
|---|---|
| | ***դ) Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (այսուհետև` ԱԿ)*** <br> • ***Առարկայական իմացության*** <br> **ԱԿ2** հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները, <br> **ԱԿ5** հասկանալ և օգտագործել քննադատական վերլուծության տեսությունների մեթոդները, <br> **ԱԿ7** ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն, <br> **ԱԿ8** հասկանալ գիտական տեսությունների ստուգման փորձարարական միջոցների արդյունքերը: <br> **ԱԿ9** դրսևորել ժամանակակից գիտելիքներ մասնագիտական ոլորտում (կառավարման տեսությունների, ոճերի, դրանց մեկնաբանությունների, մեթոդների և եղանակների իմացություն), <br> **ԱԿ10** տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները, <br> **ԱԿ11** ցուցաբերեն ինքնուրույնություն և ստեղծագործական մոտեցում տվյալ առարկայական ոլորտում գործունեություն ծավալելիս, |
| **5. Ուսուցման և դասավանդման մոտեցումներ** | Ուսուցման իրականացման հիմնական ձևերն են. <br> ա) դասախոսություններ, <br> բ) գործնական աշխատանքներ, սեմինարներ, <br> գ) ուսանողի ինքնուրույն աշխատանքներ (ռեֆերատ, էսսե, նախագիծ, զեկույց), <br> դ) գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաներ: |
| **6. Գնահատման մեթոդներ** | ՎՊՀ–ում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ: <br> Մագիստրատուրայի ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 100 միավորանոց սանդղակը, որը համապատասխանում է ECTS գնահատման համակարգին: <br> Այն ներառում է հետևյալ բաղադրիչների գնահատում և հաշվառում. |

| | |
|---|---|
| | - ինքնուրույն կատարվող աշխատանքներ,<br>- գործնական, սեմինար աշխատանքներին ուսանողի մասնակցություն,<br>- 2 ընթացիկ ստուգում կամ 2 ընթացիկ քննություն: |
| **7. Մասնագիտական գործունեության ոլորտներ** | «Կրթության կառավարում» (011101.05.7) մասնագիտությամբ մագիստրոսը բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝<br>1. հանրակրթական դպրոցի ԴԱԿ,<br>2. գիտական-կրթական կենտրոնների աշխատակից<br>3. տարբեր կրթադաստիարակչական հաստատություններում ղեկավար<br>4. հասարակական կազմակերպություններում որպես կազմակերպիչ |
| **Հետագա ուսման հնարավորությունները** | «Կրթության կառավարում» (011101.05.7) մասնագիտությամբ կրթության մագիստրոսի բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած մագիստրոսը պատրաստ է կրթությունը շարունակելու՝<br>- ասպիրանտուրայում,<br>- դոկտորանտուրայում: |